

չելագործութիւն Աստուծոյ Փրկչին մերոյ, որ այնչափ բազում զօրօք երկեալ, և ահաբեկ եղեալ ի սակաւ զօրաց, զոր վերագոյն գրեալ կայ, և միջարեկ եղեալ նկուն դարձաւ և կորեալ: Զոր փանօք անմահ թագաւորին, որ զբազումս նուազեցուցանէ և զնուազն բազմացուցանէ: Այսքան առ այս:

Եւ յետ ոչ բազում ինչ աուր իրբեւ լուաւ Բըզվան գքանցլերին դառնալն, եկն զօրովք ի վերայ Օլախի պարոնին Երեմիային, զի կալցէ զնա, զոր թուղեալ էր քանցլէր անդ, և զիւր զՕլախի հեծելն, ընդ որս էր սդարոսդան Կամինցոյ Բօղոցկին, զոր էր գլուխ զօրաց, և հարան ընդ միմեանս. վաղվաղակի կոտորեցին զԲըզվանին զզօրքն. և զինքն կենդանի կալան, և բերին Սեչով, և խազուխ զարկին: Զոր Տէրն մեր վրէժխնդիր եղեւ նմա, վասն անմեղ և անպարտ արեանց՝ զոր հեղեալ էր այդ պիղծն: Ընդ նմա կալան զմեծ իշխանն իւր զՊալըհօր, և զնա կամէին խաղուխ զարնել, զոր բազում գանձք խոստացաւ նոցա՝ զի մի սպանցեն զնա. զոր ոմանք ասէին երկու բոլպոչօք (տակառիկ) կարմիր Ֆլորի:

1596-7. ԹՎ. ՌԽԵ. Ի յայսմ ամի ոմն Նալիվայքո՝ զոր կայ գրեալ ի մէջ թղթոյս այս, և ընկերն նորա Լօպօտայ, ժողովեցին բազում խազախներս ընդ ձեռամբ իւրեանց, զոր ոմանք ասէին 20,000. և էր այս Նալիվայքո աղքատ տանէ այս քաղքիս, և եղեւ գլուխ ի վերայ խազախներաց. բայց էր ինքն հմուտ կուլոյ և քաջ պատերազմող. և սկսաւ բազում չարիս գործել և վնաս առնել ի մէջ այս երկրիս. ուր և հասանէր, ի քաղաք և ի գեօղս, զամենսեան առ հասարակ կոտորէր, զարս և զկանայս, զծերս և զտղայս, զմեծամեծս և զիշխանս, և զտունս նոցա և զամենայն բարութիւնս աւար հարկանելով: Մինչ զի եհաս բանս այս առ թագաւորն. և իրբեւ լուաւ թագաւորն՝ արտմեցաւ յոյժ. և հրամայեաց մեծամեծաց և զօրապետաց իւրոց, զի փութով երթիցեն զօրօք իւրեանց ի վերայ այդ չարագործ Նալիվայքոին և Լօպօպային, և ջնջեցեն զնոսս յերկրէ: Եւ նոքա եկեալ ի սպառ կոտորեցին զնոսս, և զԼօպօտան գլխատեցին իւր խազախներն: Իրբեւ ետես Նալիվայքոն եթէ ոչ ինչ օգնէ, շիւարեցաւ, և ինքնին գնաց առ զօրապետն թագաւորին. և նա նոյն ժամ հրամայեաց մերկացուցանել ի մեծագին հանդերձից զորս զգեցեալն էր, և երկաթի կապանօք առեալ տարան առ թագաւորն. և այսպէս բարձաւ չարն ի միջոյ, և ամենեքեան ազատեցան ի ձեռաց նոցա:

1597-8. ԹՎին ՌԽԶ. Եկաւ Նեմիչի եպիսկոպոսն Գժօնց Վօլուցքիյ ի Ս. Նեկիոյայ եկեղեցոյ, ի հետ սդարոսդային Բան Բոցոցքիյին, և այլ քաղաքիս բազում իշխանք և ամբօխ բազում. մինչ զի լցաւ եկեղեցին բազմութեամբ. և սկսան տրամաբանութիւն առնել և հարցաքննութիւն վասն օրինաց և եկեղեցական կարգաց և սահմանաց: Եւ ես մեղաւորս Յովաննէս աւագերեցս, որ եմ տրուպ ի կարգաւորացս և յետինս ի քահանայիցս, ըստ կարգի և ըստ պատշաճի՝ վասն ամենայնի պատասխանի ետու նոցա, մինչ զի հաւանեցան և ետուն փառս Աստուծոյն: